«Ժողովրդավարության՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի հետ օգոստոսի 24-25-ի քննարկումների արդյունքներով Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծում Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի առաջարկած փոփոխությունները

Հոդված 26, մաս 3

3. Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Հոդված 47, մաս 2

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ պետական լեզվին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Հոդված 89. Ազգային ժողովի կազմը եւ ընտրության կարգը

1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքում կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Քաղաքական կոալիցիայի ձևավորման սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

Հոդված 105, մաս 2

2. Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միեւնույն կուսակցության կամ կուսակցությունների նախընտրական դաշինքի պատգամավորները:

Հոդված 124. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը եւ նրան ներկայացվող պահանջները

2. Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Հոդված 147, մաս 1

1. Կառավարության անդամ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով բավարարում է պատգամավորին ներկայացվող պահանջներին:

Հոդված 163 մաս 10

10. Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով եւ Դատական օրենսգրքով: Դատավորների վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

Հոդված *166* ***մաս 3***

3. Սահմանադրական դատարանի դատավորներն ընտրվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող իրավաբանների թվից, ում քառասուն տարին լրացել է եւ ովքեր ունեն բարձր մասնագիտական որակներ եւ մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձ: Դատավորների ընդհանուր ժողովը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածություններն առաջարկում է դատավորների կազմից:

Հոդված 175 մաս 2, կետ 4

առանձին դեպքերում պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.

Հոդված 191, մաս 3

3. Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ: Ազգային ժողովն օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին կարող է անձեռնմխելիությունից զրկել պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարում են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

201 ***հոդվածի*** *1-****ին մասից հանել*** *8****9 հոդվածը****:*